

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԼԵԶԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԱԳԱ ԴԱՐԵՐԻ ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՐԱ

Գ. Ղ ՄԻՐԶՈՅԱՆ

Հետնարեկացիական հայ մատենագրության վրա Նարեկացու անուրանալի ազդեցության մասին հետաքրքիր դիտարկումներ են կատարել դեռևս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային աշխատության հեղինակները. այս կամ այն բառի համար բերելով համապատասխան վկայություններ Նարեկացուց և հետագա դարերի հայ մատենագիրներից՝ երբեմն Նարեկացու օրինակից հետո բավարարվել են՝ գրելով «յորմէ և...»՝ առանց վկայակոչելու տվյալ հեղինակի միտքը: Օրինակ՝ **Գերասնակիր** բառադրվածում կարդում ենք. «**Գերասնակիր**. ա. Որ կրէ յինքեան զգերան (աչք կեղծաորի). Գերասնակիր ակնս թշուառացեալ. Նար. ԻԷ: յորմէ և Լմբ»: Մեկ ուրիշ անգամ հարկ են համարել վկայակոչել նաև տվյալ հեղինակի միտքը: Օրինակ, **Կկեմ** բառադրվածում գրում են. «Կկեմ, Եցի. ն... Հենուլ կկոցաւ կամ մագուգաւ. ոստայնանկել. անկանել. նիւթել. կտաւ գործել, բսնիլ...: Ոստայնս չարեաց կկեցի. Նար. Է. յորմէ և Մաշկ. Ոստայնս չարեաց կկեցեր» (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Ինչպես տեսնում ենք, այս դեպքում գործ ունենք ոչ թե Նարեկացու բառի, այլ արտահայտության գրեթե նույնական կրկնության հետ: Կամ և այնպիսի դեպքեր, երբ բառարանագիրները չեն կատարում «յորմէ և» նշումը, բայց բերված օրինակներից ակնհայտ երևում է Նարեկացու բառի ու բանի գործածությունը: Այդ տեսակետից հատկանշական է **Տիեզերաստոյգ** բառադրվածը. «Տիեզերաստոյգ. ա. Սուգիչ՝ ընկղմիչ՝ խեղդիչ տիեզերաց. տիեզերահեղձոյց. Գերագանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերաստոյգ ամենասպառ ծովուն յորդոթին: Գերակայ քան զտիեզերաստոյգ ջրհեղեղին յորձանս. Նար. ԺԵ: **Բենիկ**»: Դիտելի է, որ **Բենիկ** անուն հեղինակի մասին բառարանի առաջին հատորի «Նախադրումը» բաժնում կարդում ենք. «**Բենիկ**. Արօթամատոյց գիրք **Բենիկ** անուն կամ՝ ...վարդապետի ի միջին դարս, ստորնագոյն ոճով, այլ խորնագոյն բառիւք և բարդութեամբք, իբր հետևողութեամբ հնութեանց, մանաւանդ հապուածոց Նարեկի: Վարդան ծերունին առ ժամանակօք Ընդոխալոյն ի խրատս իւր բերէ ի վկայութիւն զբան վարդապետի ուրումն, զոր կոչէ **Բենէ**» (էջ 10, ընդգծ. իմն է - Հ. Ղ.): Բառարանագիրներն ընդամենը մի քանի բառով այնքան դիպուկ ու ճիշտ են բնութագրել **Բենիկ** վարդապետի գրելաժողը, որ հաստատվում է նույնիսկ վերը վկայակոչված նախադասությամբ. հիմնականում պահելով Նարեկացու բառերը՝ **Բենիկ** վարդապետը, ըստ բառաբարդման իր սիրած սկզբունքի, Նարեկացու «զհեղեղին ջրակուտակ» բառերի փոխարեն գործածել է **ջրհեղեղ** բառը, բայց թե որքանով է արդարացված դա, արդեն այլ հարց է:

Բառարանագիրները, իհարկե, խնդիր չեն ունեցել հանգամանորեն ցուցադրելու հետագա դարերի հայ մատենագրության վրա Նարեկացու գործած ազդեցությունը, բայց իրենց կատարած տիտանական աշխատանքով ըստ ամենայնի հող են նախապատրաստել դա անելու համար: «Նարեկացու բառաշխարհը» հողվածը պատրաստելիս տեսնելով, որ հետնարեկացիական հայ մատենագիրներից շատերը գործածել են նարեկացիական բազմաթիվ բառեր, գրել էի. «Բառարանում հարյուրավոր բառեր վկայված են միայն Նարեկացու և նրան հաջորդած հայ մատենագիրների երկերով: Ենթադրելի է, որ վերջիններս օգտվել են Նարեկացուց»¹: Ծիշտ է, այնուհետև բերել էի մի քանի օրինակ իմ այդ

¹ Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու բառաշխարհը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, թիվ 1, էջ 91:

ենթադրությունը հաստատելու համար, քայց, խոստովանում են, դժվար էր պատկերացնել Նարեկացու գործած այդօրինակ ազդեցության իրական չափն ու սահմանները: Նույն բառարանից հավաքելով միայն Նարեկացիով և հետագա դարերի հայ մատենագիրներով վկայված բառերը, համեմատելով բերված օրինակները, որոշակի սկզբունքով խմբավորելով ու դասակարգելով դրանք՝ ստացվեց հիրավի գարմանալի արդյունք, որը ընդհանուր գծերով կցանկանայի ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Նախապես ասեն, որ այն, ինչ առկա է բառարանում, դեռ ամբողջը չէ, որովհետև նախ, ցավոք, Նարեկացու ստեղծած ոչ բոլոր բառերն են արտացոլված բառգրքում. երբեմն այս կամ այն բառը թյուրիմացաբար վերագրվել է հետագա դարերի մատենագիրներին: Օրինակ, Նարեկացին է ստեղծել նախալիշապակեալ բառը, որը գործածել է Ալաբանից խաչի պատմության մեջ («...նախալիշատակեալ մեծ եպիսկոպոսն պսակ Սիոնի և ծառայն Յիսուսի»²), քայց բառգրքում վկայված է միայն Ներսես Լամբրոնացիով: Բնականաբար կան այսօրինակ այլ փաստեր ևս, որոնք առայժմ, քանի դեռ չունենք բանաստեղծի բոլոր ստեղծագործությունների համաբարբառը, անհնար է ճշգրտել: Բացի այդ՝ բառարանում ընդհանրապես չեն բերված Կճավա վանահորը Նարեկացու գրած թղթում առկա նորաստեղծ բառերը, որոնց թիվն անցնում է մեկ տասնյակից: Դրանից են, օրինակ, **խնրանկէծ, մեծառեծառ, գարբանութիւն, բազմահերչուած, լիագիպութիւն** ևն: Խնդրո առարկա թղթում կան բառեր, որոնք բառգրքում վկայված են միայն հետագա դարերի մատենագիրներով: Օրինակ, **նեկգական** բառը վկայված է միայն՝ Ը. Վիպ: Երկրորդ, հետնաբեկացիական մատենագիրների բոլոր աշխատությունները չէ, որ բառարանագիրներն ունեցել են իրենց ձեռքի տակ: Երրորդ, որ ոչ պակաս ցավալի է, իրենց մատչելի ոչ բոլոր աղբյուրներն են նրանք օգտագործել: Օրինակ, Գլածոր – Տաթևյան դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչների մատենագրական հարուստ ժառանգությունը, ամենայն հավանականությամբ դավանաբանական նկատառումներով, դուրս է մնացել բառարանագիրների հետաքրքրությունների դաշտից: Ըստ այդմ, եթե առանձին դեպքերում վկայակոչում են մահ XVII դարի մատենագիրներ Առաքել Դավրիժեցու և Ներսես Մոկացու գործածած հատուկենտ բառեր, իրականում հետնաբեկացիական մատենագրություն ասելով ներկա դեպքում նկատի ունենք մինչև XIV դարակեսն ընկած ժամանակահատվածում ստեղծված բնագրերը: Բայց նույնիսկ այս սահմանափակումներով հանդերձ՝ ամենախստապահանջ՝ մոտեցման դեպքում ստացված արդյունքն իսկապես ցնցող է: Պարզվում է, որ շուրջ երեքուկես հարյուրամյակում գրեթե բոլոր հայտնի ու անհայտ հայ մատենագիրները այս կամ այն չափով կրել են Նարեկացու լեզվական ազդեցությունը՝ օգտվելով ոչ միայն նրա կերտած բառերից, այլև բառաստեղծման արվեստից: Ի հաստատումն ասվածի՝ թվարկենք դրանցից առավել նշանավորների անունները մոտավոր ժամանակագրությամբ՝ Ասողիկ, Գրիգոր Մագիստրոս, Արիստակես Լաստիվերտցի, Գրիգոր-Վահրամ Վկայասեր, Անանիա Սանահնեցի, Յովհաննես Սարկավազ Իմաստասեր, Սամվել Անեցի, Ներսես Շնորհալի, Սարգիս Շնորհալի, Իգմատիոս, Բենիկ, Գրիգոր Դ Տղա, Մխիթար Գոշ, Վանական Վարդապետ, Ներսես Լամբրոնացի, Մխիթար Հերացի, Գրիգոր Սկևռացի³, Կիրակոս Գանձակեցի, Յովհաննես Երզնկացի, Վահրամ Բաբունի, Ստեփանոս

² «Արթոյ իօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 384: Այստեղևս այս իրատարակությունից հղում կատարելիս տողատակին նշելու ենք միայն՝ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, և էջը:

³ Թեև բառգրքի տվյալներով մարեկացիական մի շարք բառեր գործածված են նաև հետնաբեկացիական դարերում ստեղծված տարաբնույթ լուծմունքներում, որոնք ունեն «Լծ. ածաբան, Լծ. եագրի, լծ. կոչ, Լծ. մար, Լծ. սահմ, Լծ. փիլ. ևն» նշումները, քայց քանի որ դրանց հեղինակներն ու ստեղծման դարերն անհայտ են, ուստի գերադասել ենք դրանցում առկա բառերը չընդգրկել ստորև բերվող բառացանկի մեջ:

⁴ Ի դեպ՝ հայագիտական գրականության մեջ մասամբ ոչ ճիշտ պատկերացում կա Գրիգոր Միլոնցի-Սկևռացու և Գրիգոր Սկևռացի-Լամբրոնացու հարցում: Գրիգոր Միլոնցին ավանդաբար համարվել է միայն գրիչ ու մանրանկարիչ, որը Ներսես Լամբրոնացու պատվերով 1173 թ. արտագրել ու նկարագրողի է Նարեկացու «Մատեան ռդրերգութեան» գլուխգործոցը (տե՛ս Մ. Մաշտոցի անվ.

Օրբեյան, Վարդան Մեծ, Մխիթար Այրիվանցի, Մխիթար Ապարանցի, Յովհաննես Գառնեցի, Եսայի Նշեցի և ուրիշներ: Այս հեղինակների երկերում, համաձայն բառգրքի տվյալների, գտնում ենք նարեկացիական 2-3 բառից մինչև մի քանի տասնյակ բառ, իսկ Ներսես Լամբրոնացու գործերում դրանց թիվը հասնում է շուրջ հարյուրի: Գրիգոր Նարեկացին մեծապես ազդել է նաև անանուն տաղասացների, գանձասացների, ճառագիրների, շարականագիրների, վարքագիրների և այլոց վրա, որոնց ստեղծագործությունները ներառվել են տարաբնույթ ժողովածուներ, տպագրվել ու փոխանցվել սերնդեսերունդ:

Նարեկացու լեզվական ազդեցությունն զգացվում է նույնիսկ այդ շրջանում այլ լեզուներից թարգմանված երկերի վրա (Միքայել Ատրի, «Պատմութիւն վրաց», Ֆրա Մարթին, «Հարանց վարք» ևն):

Նարեկացու և հետագա դարերի հայ մատենագիրների բառաշխարհի ընդհանրության հարցը մեզ հետաքրքրում է ոչ այնքան հաջորդների վրա Նարեկացու գործած ազդեցության չափը որոշելու իմաստով, որն ըստ էության ապարդյուն գործ է, որքան նրա կյանքի ու գործունեության ինչ-ինչ մութ ծայրեր լուսաբանելու առումով: Բանն այն է, որ հիմք ընդունելով Գրիգոր Նարեկացու հանդեպ X-XI դարերի հայ մատենագիրների դրսևորած համատարած լռությունը՝ նարեկացիագետները ենթադրել են, որ նշված ժամանակահատվածում Նարեկացու գլուխգործոցը հավանաբար դեռ մնում էր անհայտ: Այս կապակցությամբ Պ. Խաչատրյանը գրել է. «Ցավով պետք է արձանագրել այն իրողությունը, որ Նարեկացուն ժամանակակից կամ ժամանակով մոտ կանգնած հայ մատենագիրներից ոչ մեկը, ըստ առկա տվյալների, 10-րդ դարի վերջում և կամ ամբողջ 11-րդ դարի ընթացքում նրա անունը չի հիշատակում. ո՛չ Ուխտանեսը (10-րդ դ.), որը կրթություն է ստացել Նարեկա վանքի դպրոցում՝ Անանիա Նարեկացու ձեռքի տակ, ո՛չ Ատողիկը (10-11-րդ դդ.), որն իր «Տիեզերական պատմությունն» ավարտել է 1004 թվականով, և ո՛չ էլ Գրիգոր Մագիստրոսը (մեռ. 1058 կամ 1059 թ.) Նարեկացուն չեն հիշում, մինչդեռ նրա ուսուցիչ՝ Անանիա Նարեկացու մասին խոսելիս նրանք, բնականաբար, պետք է տային և նրա անունը: Մեծն Գրիգոր Նարեկացու գլխավոր երկը՝ «Ողբերգության մատյանը», 11-րդ դ. առաջին կեսին հավանաբար դեռ փարածում ու լայն ճանաչում չէր գտել: Նրա հոչակը հայ իրականության մեջ բարձրանում է 12-րդ դարում, նախ և առաջ Կիլիկյան Հայաստանի սահմաններում» (ընդգծ. իմն է - Հ.Ղ.): Իրավամբ հարց է ծագում. եթե Նարեկացու անունը X-XI դարերի հայ մատենագիրները չեն հիշատակում, ապա դրանից կարելի* է եզրակացնել, որ նրա գլուխգործոցը «հավանաբար դեռ տարածում ու լայն ճանաչում չէր գտել»: Անկարևոր չէ և այն հարցը, թե ավելի քան մեկուկեսդարյա մտացույթունից հետո ինչպե՞ս կամ ի՞նչ ճանապարհով այն հասավ Կիլիկյան Հայաստան, որտեղ XII դարի երկրորդ կեսին բարձրացավ նրա հոչակը: Հարցեր են սրանք, որոնց պատասխանելու համար լուրջ կոպաններ է տալիս ընթերցողի դատին ներկայացվող բառացանկը: Հարկավ, այն արժանի է լեզվագիտական-մասնագիտական մանրագնին քննության, իսկ ներկա դեպքում կարևորում ենք բանասիրական-աղբյուրագիտական և պատմագիտական տեսանկյունից:

Քանի որ Նարեկացու մասին լռություն պահպանող մատենագիրների շարքում Պ. Խաչատրյանը նշում է նաև Գրիգոր Մագիստրոսի անունը, ուստի նպատակահարմար է ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այդ տեսակետից Հայկազյան լեզվի բառգրքի ընձեռած նյութը, որը կարելի է բաժանել 4 խմբի՝ ա) միայն Նարեկացիով և Մագիստրոսով

մատենադարան, ձեռ. թիվ 1568), իսկ Գրիգոր Սկևռացին դիտվել է «բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ» (ՀՍՀ, հ. 3): Ըստ այդմ՝ վերջինիս են վերագրվել թե «Գիրք աղօթից» (Կ. Պոլիս, 1742), թե «Ներբողեան ի սուրբն Ներսես Լամբրոնացի» և թե համանման այլ ստեղծագործություններ: Մինչդեռ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ դրանց մի մասը, օրինակ՝ «Գիրք աղօթից»-ը, պատկանում է Միհնցու գրչին: Մակայն այս հարցը կարիք ունի բանասիրական ու աղբյուրագիտական հանգամանակից ուսումնասիրության, ուստի առայժմ ավելիմ ասել չենք ցանկանում:

* Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 19-20:

վկայված բառեր, ք) Նարեկացիով, Մագիստրոսով և այլ հեղինակներով վկայված բառեր, գ) Նարեկացիով, Մագիստրոսով, հետագա դարերի մատենագիրներով և ժամանակագրական տեսակետից անստույգ ժողովածուներով վկայված բառեր, դ) Նարեկյան դպրոցի մյուս դեմքերով, Նարեկացիով և Մագիստրոսով վկայված բառեր: Դրանցից վերջինի դեպքում Նարեկացին, բնականաբար, հանդես է գալիս որպես նարեկյան դպրոցի և Մագիստրոսի միջև կապ հաստատող, այսինքն՝ Խոսրով Անձևացու և Անանիա Նարեկացու ստեղծած բառերը գործածող և այլոց փոխանցող: Դրանք ընդամենը չորսն են (անպակտ, գերակայացեալ կամ գերակայեալ, յոզնարեղուն, սխալութիւն կամ սխալումն), որոնցից ուշագրավ է հատկապես գերակայացեալ կամ գերակայեալ բառը, որը բառգրքում միակն է՝ վկայված Մագիստրոսով, Անանիա Նարեկացիով, Խոսրով Անձևացիով և Գրիգոր Նարեկացիով: Ասեմ նաև, որ նարեկյան դպրոցի երեք ներկայացուցիչները բառս գործածել են գերակայեալ ձևով, իսկ Մագիստրոսը՝ գերակայացեալ: Մագիստրոսը Ասորի կաթողիկոսին եղած թղթում երկու անգամ հիշատակում է Անանիա Նարեկացու անունը՝ որպես թոնդակեցիների գաղափարական հակառակորդի: Ընդ որում, հայտնում է, որ թոնդակեցիների դեմ ուղղված իր երկը նա գրել է հայոց կաթողիկոս Անանիա Ա Մոկացու խնդրանքով: Համոզված եմ, որ Մագիստրոսը անպայման պատկերացում է ունեցել նաև Կճավա վանքի վանահորը Նարեկացու գրած հակաթոնդրական նամակի մասին:

բ) և գ) խմբերի համար ունենք համապատասխանաբար՝ 8 և 4 բառ: Այս դեպքում դրանք ևս մի կողմ ենք թողնում, որովհետև ավելի կարևոր են հատկապես ա) խմբի բառերը՝ թվով 17: Դրանք են՝

Աբոռակ – Նար. տաղ սայլի, Մագ. ՀԷ
 Ամլածին – Նար. կուս, Մագ. ԾԸ
 Անգծագիր,
 Անգծագրելի – Մագ. Մանուչ, Նար. ՂԲ
 Աննահանջ,
 Աննահանջելի – Մագ. ԻԷ, Նար. Գ
 Աննուագութիւն – Նար. ԽԴ, Մագ. Թ
 Արտակիտել – Նար. Յովէդ, Մագ. ԺԳ, ԺԸ,
 Մագ. ԺԲ, Լ, ԼԷ
 Բարելութիւն – Նար. Խչ, Մագ. Խչ
 Գիշերայած,
 Գիշերայածու – Նար. Յովէդ, Մագ. ԾԷ

Դժոխային – Նար. ԺԱ*, ԾԶ, Մագ. Հ
 Լափլեզ,
 Լափլիզող – Մագ. ԼԸ, Նար. Ժ
 Լուծակնութիւն – Նար. ՂԳ և Դ, Մագ. ՀԸ
 Կատակերգական** – Մագ. ԺԱ, Նար. ԽԵ
 Կարծրակոփ – Նար. Խչ, Մագ. ԺԳ
 Կոճեմ,
 Կոճումն – Մագ. Ը, Նար. ՂԲ
 Յոզնատեսիլ – Նար. ՂԳ, Մագ. ԿԲ
 Պարագային – Մագ. ԺԴ, Նար. ՂԳ***
 Քաղցրածայնել – Մագ. ԺԵ, Նար. տաղ

Ընդհանուր առմամբ Մագիստրոսի գործածած նարեկացիական 29 բառից 18-ը Մատյանից է, 3-ական բառ՝ Խաչի և Աստվածածնի ներբողից, 2-ական բառ՝ տաղերից և Յովէդից, իսկ 1 բառ Թղթից և Մատյանից:

Նախ՝ ուշագրավ է, որ, բացի Մատյանից, Մագիստրոսը քաջատեղյակ է եղել նաև Նարեկացու մի շարք այլ ստեղծագործությունների: Երկրորդ, Մագիստրոսն առանձնապես օգտվել է Նարեկացու Մատյանի բառապաշարից ու բառաստեղծական արվեստից: Երրորդ, նարեկացիական բառերից 8-ը վերցված է Մատյանի ՂԲ և ՂԳ գլուխներից: Իսկ թե դա ինչ նշանակություն ունի, այդ մասին կխոսենք հետո: Չորրորդ, վերք բերված 17 բառից 5-ը տրված է 2 տարբերակով (անգծագիր-անգծագրելի, աննահանջ-աննահանջելի, գիշերայած-գիշերայածու, լափլեզ-լափլիզող, կոճեմ-կոճումն), որը, ըստ էության, հետևանք է այն բանի, որ Մագիստրոսը, չցանկանալով նույնությամբ կրկնել

* Տես «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն յառաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 153, 160:

** Բառգրքում սխալմամբ նշված է ԺԲ:

*** Նարեկացին բառս առաջին անգամ գործածել է հիշյալ թղթում («Թէ գերախայրեացն կատակերգական երգիծանութիւն»), բայց բառգրքում դա չի նշված:

**** Բառգրքում նշված է ՂԲ:

Նարեկացու այս կամ այն բառը, փորձել է այն յուրացնել ստեղծագործաբար, ուստի ստեղծել է նույն բառի նոր տարբերակ: Ի դեպ՝ այս սկզբունքը գալիս է հենց Նարեկացուց, որը, հաճախ չգոհանալով այս կամ այն պատրաստի բառի գործածությամբ, ստեղծել է դրա հումանիշը: Օրինակ, **բազմապատկյալ** բառը, որը գալիս էր Պիտոյից գրքից, Մատյանի ԽԸ բանում գործածել է «բազմապատկյալ առակագրութեամբ» բառակապակցության մեջ, բայց **ՂԳ** բանում արդեն ստեղծել է **յոզմապատկյալ** հումանիշը՝ «յոզմապատկյալ պճնութիւն բանին Եզեկիելի» (տ. 300)³: Ասենք նաև, որ նարեկացիական այս սկզբունքը, Մագիստրոսից բացի, լայնորեն կիրառել են նաև Ներսես Շնորհալյին, Ներսես Լամբրոնացին, Յովհաննես Երզնկացին և ուրիշներ:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, բացի Գրիգոր Մագիստրոսից, զուտ նարեկացիական բառեր օգտագործել է նաև բանաստեղծի ժամանակակից Ասողիկը (**անջնորհութիւն, լուսարան**), որի երկում հանդիպում են նաև նարեկյան դպրոցում ստեղծված մի քանի բառ (**անհամբեր, կողոպտանք և պարսպափակ**), բայց քանի որ դրանց թիվը խիստ սահմանափակ է, ուստի չենք ցանկանում ծանրանալ դրանց վրա:

X-XI դարերի հայ ականավոր մատենագիրներից հաջորդը Արիստակես Լաստիվերտցին է, որը, ըստ մեր հավաքած տվյալների, գործածել է նարեկացիական 11 բառ, որոնցից 4-ը վկայված է միայն Նարեկացիով և Լաստիվերտցիով, 5-ը՝ Նարեկացիով, Լաստիվերտցիով և այլ մատենագիրներով, իսկ 2-ը՝ դրանցից բացի նաև ստույգ ժամանակագրություն չունեցող ժողովածուներով: Լաստիվերտցու գործածած բառերից գերակշիռ են Մատյանից վերցվածները, թեև հաճախ նույն բառը վկայված է ոչ միայն Մատյանով, այլև բանաստեղծի մեկ կամ մեկից ավելի ուրիշ ստեղծագործությամբ: Օրինակ, Նարեկացու **անջնջական** բառը գործածված է բանաստեղծի Խաչի և Ի սուրբն Յակոբ ներբողներում ու Մատյանում (ԽԶ և ՀԳ), իսկ Լաստիվերտցին օգտագործել է **անջնջելի** ձևով: Ըիշտ է, բառադրում այս երկուսը դիտված են որպես մեկ բառ և **անջինջ** բառի հումանիշ՝ «տ. **անջինջ** ըստ ա. **նշ**», բայց քանի որ **անջինջ** բառը գալիս է դեռևս 5-րդ դ. հայերեն թարգմանական և ինքնուրույն գրավոր աղբյուրներից և գործածել է նաև Նարեկացին Ապարանից խաչի պատմության հիշատակարանում («արձանացուցի սմին անջինջ յիշատակ»), ուստի այս դեպքում ևս բանաստեղծը, ասես չգոհանալով եղածով, ստեղծել է նույն բառի նոր հումանիշ, իսկ Լաստիվերտցին այդ նույն սկբունքով ստեղծել է **անջնջելի** տարբերակը: Անշուշտ, նման դեպքերում դժվար է ստուգապես որոշել՝ արդյոք Լաստիվերտցին նարեկացիական տվյալ բառը վերցրել է Մատյանից, թե՞ բանաստեղծի մեկ ուրիշ ստեղծագործությունից, բայց հստակ է, որ, բացի Մատյանից, նա լավատեղյակ է եղել նաև Երզ երգոցի մեկնությանը: Այդ է հաստատում այն փաստը, որ Լաստիվերտցու գործածած նարեկացիական 11 բառից 2-ը (**երամակացեալ** կամ **երամակեալ** և **կենդանապուրեղութիւն**) բառադրում վկայված են Նարեկացու միայն այդ ստեղծագործությամբ: Ընդ որում, նարեկացիական **երամակացեալ** բառը Լաստիվերտցին գործածել է **երամակեալ** ձևով, այսինքն՝ հետևելով Նարեկացու սկզբունքին՝ դրսևորել է ստեղծագործական մոտեցում:

Ոչ պակաս հետաքրքրական է նաև XI-XII դարերի ականավոր մտածող Յովհաննես Իմաստասերի (մահ. 1129 թ.) Նարեկացու հետ ունեցած առնչությունը: Ստորև ներկայացվող բառացանկում 5 բառ վկայված է միայն Նարեկացու և Մարկավագի, 4 բառ՝ Նարեկացու, Մարկավագի և այլ հեղինակների, վերջապես՝ 5 բառ՝ Նարեկացու, Մարկավագի, այլ հեղինակների երկերով և ստույգ ժամանակագրություն չունեցող ժողովածուներով: Գրանցից 10 դեպքում վկայված է Մատյանը, 2 դեպքում՝ Խրատական բանքը, իսկ մեկական անգամ՝ Առաքելոց և Ի սուրբն Յակոբ ներբողները: Ուշագրավ է, որ Մարկավագը նույնպես Լաստիվերտցու նման երբեմն փորձել է ստեղծագործաբար յուրացնել նարեկացիական բառերը: Այդ տեսակետից հետաքրքիր է, որ Նարեկացին Մատյանում ընդամենը

³ Այս և հետագա նմանօրինակ հղումները կատարում ենք Մատյանի ակադեմիական հրատարակությունից՝ Գրիգոր Նարեկացի, Մատենա ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազիմյանի, Եր., 1985:

մեկ անգամ գործածել է **Յոզևանասանեայ** բառը (Յոզի թախծուրեան յոզնամասնեայ տա-
րակուսանաց, Բան ՀԳ, տ. 22), իսկ Սարկավագն այն դարձրել է Յոզնամասնական (Ո՛չ
զեռզին բանական՝ մարմին կարծենք շարադրական, և ո՛չ դարձեալ զյոզնամասնական
մարմինն՝ պարզ հոգի բանական): Դիտելի է այն պարագան, որ բառգրքում իբրև այս բա-
ռի հոմանիշ հղված է **բազմամասնեայ** բառը, իսկ վերջինիս համար՝ **բազմամասն** բառը:
Ընդ որում, թեև այս բառը նույնպես ծանոթ է եղել Սարկավագին, քանզի վկայված է նաև
նրա համապատասխան միտքը, բայց կատարելով մասնակի փոփոխություն՝ գերադասել
է Նարեկացու ստեղծած **յոզնամասնեայ** բառը: Իսկ Նարեկացին, ստեղծած լինելով **բազ-
մամասնեայ** բառը, որը քանիցս օգտագործել է Մատյանում, ինչպես նաև Առաքելոց ներ-
քողում, նախընտրել է գործածել նաև **յոզնամասնեայ** տարբերակը:

Հարկավ, այստեղ կարելի է անդրադառնալ նաև Նարեկացի-Գոշ բառապաշարային
աղերսներին, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որը Գոշը նախ՝ ստեղծագործել է
հիմնականում XII դարի 2-րդ կեսին (մահ. 1213թ.), երկրորդ, առժամանակ ուսանել էր Կի-
լիկիայի Սև լեռան դպրոցում, իսկ այնուհետև սերտ կապեր է ունեցել կիլիկյան գործիչնե-
րի հետ (հայտնի է, որ իր Դատաստանագիրքը գրել է Գրիգոր Դ. Տոա կաթողիկոսի պատ-
վերով), ուստի առայժմ դրանցով չեն զբաղվում: Ասեմ միայն, որ նա Նարեկացուց վերցրել
է 11 բառ, որոնցից 8-ը Մատյանից է, 2-ը՝ «Սայլն այն իջաներ...» տաղից, իսկ 1-ը՝ Առա-
քելոց ներքողից: Դրանցից 6-ը գործածել է առակներում, 4-ը՝ Դատաստանագրքում և 1-
ը՝ աղոթքում: Դիտելի է, որ Նարեկացու «Սայլն այն իջաներ...» ստեղծագործությունից
Գոշը վերցրել է **խուրոք** և **կորնգան** բառերը: Ընդ որում, Նարեկացին գրել է. «Եթէ հարիւր
բարդ խոյրձան, վեց կորնկան, // Մին մանուշակ՝ խրձադիզեալ», իսկ Գոշի ԼԳ առակում
կարդում ենք. «Գնդածաղիկը, և կորնգան՝ և խուրոք, առույտ կապոյտ, և սէգ»: Կարծում
եմ՝ նմանությունն ակհնայտ է: Բավական է ասել միայն, որ հենց այդ երկու ծաղկանու-
նների գործածությունը կողք կողքի վկայում է Նարեկացի-Գոշ ընդհանրության մասին:

Եթե փորձենք ամփոփել Ասողիկի, Մագիստրոսի, Լաստիվերոցու և Յովհաննես
Սարկավագի կապակցությամբ վերը բերված փաստական տվյալները, ապա կարող ենք
ասել, որ նախակիլիկյան շրջանում մայր Հայաստանում ապրած ու ստեղծագործած այդ
չորս հեղինակները միասին գործածել են 56 (համապատասխանաբար՝ 2, 29, 11, 14) բառ,
որոնք վերցված են բանաստեղծի հայտնի գրեթե բոլոր ստեղծագործություններից:

Ճիշտ է, երբեմն նույն բառի համար հղումներ են կատարվում բանաստեղծի մեկից
ավելի երկերից և կամ նույն բառն օգտագործում են 2-3 մատենագիր (օրինակ՝ Լուսարան
բառն օգտագործել են Ասողիկն ու Լաստիվերոցին, **Կործանակաւնը՝** Լաստիվերոցին ու
Սարկավագը, իսկ **Երկնաչուուն՝** Մագիստրոսն ու Սարկավագը), բայց այդպիսի բառերի
թիվն առանձնապես մեծ չէ: Հիշյալ 56 բառից 39-ի դեպքում օրինակներ են բերված Մա-
տյանից, այդ թվում՝ ԴԲ գլխից 6, իսկ ԴԳ-ից 8 անգամ: Ասեմք նաև, որ այդ զույգներից
4-ական բառ գործածել է Գրիգոր Մագիստրոսը: Դա նշանակում է, որ դեռևս XI դարի ա-
ռաջին կեսին դրանք եղել են Մատյանի կազմում: Ըստ այդմ, ի հայտ է գալիս լրացուցիչ
փաստ՝ հեղքելու առանձին նարեկացիագետների այն պնդումը, որ իբր այդ զույգներն այ-
լոց կողմից ավելացվել են հետագայում: Կարծում եմ՝ վերը բերված փաստերը լիովին
հիմք են տալիս եզրակացնելու, որ թեև մինչև XII դարի երկրորդ կեսը հայ մատենագիրնե-
րը չեն հիշատակում Նարեկացու անունը, սակայն դա չի նշանակում, թե նրա ստեղծա-
գործությունները՝ հատկապես Մատյանը, եղել են մոռացված: Ընդհակառակն, մինչևկիլի-
կյան շրջանի մատենագիրներն ազատորեն օգտվել են դրանցից, առատորեն սնվել
դրանց լեզվական ու գաղափարական կենարար երակներից: Դրանով իսկ Գրիգոր Նա-
րեկացին, անկախ իր անվան շուրջ ստեղծված խորհրդավոր լուսությունից, գործում ազդե-
ցություն է ունեցել մեզ հետաքրքրող շրջանի հայ գրական-գեղարվեստական մտքի վրա՝
մեծապես նպաստելով նրա առաջընթացին:

Այստեղից ծագում են մի շարք հարցեր, որոնցից առավել կարևոր են երկուսը՝ ա)
ի՞նչն է պատճառը, որ մի կողմից հայ մատենագիրները սնվել են բանաստեղծի ստեղծա-
գործություններից, իսկ մյուս կողմից՝ համատրեմ շարունակել են լուսություն պահպանել

նրա անվան շուրջ, ք) ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով են Նարեկացու երկերը տեղափոխվել Կիլիկիայի հայոց պետություն, որտեղ էլ XII դարի վերջին նրա անունը դարձել է հանրահայտ, իսկ որոշ ժամանակ անց նա դասվել է սրբերի շարքը:

Առաջին հարցին կարող ենք պատասխանել՝ հաշվի առնելով երկու կարևոր հանգամանք. ա) պատմությունից ստուգապես հայտնի է, որ բանաստեղծի հայր Խոսրով Անձևացին՝ իբրև բարձրաստիճան հոգևորական, 961 թ. իր մահկանացուն կնքել է բանադրված⁶, իսկ դա շատ լուրջ գործոն էր նրա անվան և հարազատների շուրջ աննպաստ, եթե չասենք անհանդուրժողական վերաբերմունք ստեղծվելու համար: ք) Ինչպես ցույց ենք տվել մեր մի շարք հոդվածներում⁷, Մատյանը զրելուց առաջ, ավելի ստույգ՝ 997 թ., Նարեկացին նույնպես արժանացել է համանման պատժի, որը Մատյանն ավարտելուց հետո թեև հանվել է բանաստեղծի վրայից, բայց հասարակական գիտակցության վրա դրա թողած բացասական նստվածքը շարունակել է գոյատևել, ուստի ժամանակակիցները (Ասողիկ, Մագիստրոս) ու անմիջական հաջորդները (Լաստիվերտցի, Սարկավազ և այլք), դեռ գտնվելով կատարվածի տպավորության տակ, դրսևորել են սովորական զգուշավորություն ու ավելորդ անախորժություններից խուսափելու նպատակով գերադասել են լռելյայն ընթերցել նրա ստեղծագործությունները, որոնք, թե՛ լեզվական և թե՛ գաղափարական տեսակետից լինելով չափազանց նոր ու նորարական, բնականաբար ազդել են նրանց լեզվի ու մտածողության վրա: Ժամանակակիցների ու անմիջական հաջորդների այս հարկադրական զգուշավորությունը, դառնալով սովորույթ ու ավանդույթ, ինքնուրույն ուժով գոյատևել է մինչև XII դարի 70-ական թվականները, բայց, իհարկե, մասամբ թուլացած և ուժազրկված: Ահա հենց այդ ժամանակ էլ հայ գրական-մշակութային կյանքում փայլատևում է Ներսես Լամբրոնացու բացառիկ հանճարը, որն իրեն հատուկ խորխոր ու համարձակ բնավորությամբ ըմբոստացավ ժամանակի մտածողության վրա իշխող շատ ու շատ անցանկալի սովորույթների ու ավանդույթների դեմ, դրանք կանգնեցրեց բանականության դատաստանի առջև և դրանցից շատերը դեն մետեց՝ որպես ավելորդ ու վնասակար հնուտի, որոնցից էր նաև Նարեկացու անվան շուրջ պահպանվող ավելի քան մեկուկեսդարյա հանիրավի լռությունը: Ասվածն ավելի հասկանալի կդառնա բանաստեղծի երկերի Կիլիկիա փոխադրվելու մայրուղու հարցը քննարկելուց հետո:

Վերը արդեն ցույց տվեցի, որ մինչև XII դարի կեսերը գործած հետմարեկացիական հեղինակներից Նարեկացու լեզվական ազդեցությանն ամենից ուժեղ զգացվում է Մագիստրոսի մատենագրական ժառանգության վրա: Հայտնի է նաև, որ Մագիստրոսը՝ որպես իր դարաշրջանի հասարակական-քաղաքական ակնաւոր գործիչ, կրթության ու դաստիարակության գործի եռանդուն կազմակերպիչ էր, լուսավորականության անխնայ տարածող, գիտական ու մշակութային կյանքին տոն ու ընթացք տվող վիթխարի անհատականություն: Այդ են վկայում նրա տարաբնույթ ստեղծագործությունները, ի մասնավորի նրա բազում նամակները՝ ուղղված ժամանակի աշխարհիկ ու հոգևոր տասնյակ գործիչների, որոնց թվում էին կաթողիկոս ու ամիրա, արքեպիսկոպոս ու իշխան, եպիսկոպոս ու վարդապետ, աշակերտ ու հարագատ որդի և հայտնի ու անհայտ շատ այլ դեմքեր:

Պատմությունից ստուգապես հայտնի է նաև, որ սկսած 1066 թ. մինչև 1203 թ.՝ հայոց կաթողիկոսական աթոռին բազմել են բացառապես Մագիստրոսի շառավիղները՝ որդին (Վկայասեր), թոռը (Բարսեղ Ա Անեցի), ծոռները (Գրիգոր Գ և Ներսես Շնորհալի), ծոռնորդիները (Գրիգոր Դ Տղա և Գրիգոր Ապիրատ) և ծոռան թոռը (Գրիգոր Ե Քարավեժ): Իսկ քանի որ Մագիստրոսը, յխնայելով ջանք, եռանդ ու միջոցներ, իր զավակներին, հատկապես Վահրամ-Գրիգոր Վկայասերին, տվել էր ժամանակի համար բացառիկ կրթություն ու դաստիարակություն՝ պատվիրելով «զաւանդութիւն մեր ոչ մոռանալ երբէք և

⁶ Բարեբախտաբար պահպանվել է հենց բանադրող կաթողիկոս Անանիա Ա Մոկացու թուղթն այդ մասին՝ ուղղված ապագա սերունդներին (տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիլք Բ, աշխատասիրությամբ Պ. Հ. Հակոբյանի, ս. Էջմիածին, 1998, էջ 124-127:

⁷ Տե՛ս, օրինակ, Հ. Պ. Միրզոյան, Նարեկացու անեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1:

գվտոյ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր և զլոյս ճրագի նախնույն մերոյ ոչ շիջանել»⁸, ուստի վերջինս, ասես կատարելով հայրական պատվիրանը, մինչև կյանքի վերջը անմնացորդ նվիրվեց զրականությանն ու մշակույթին՝ մասամբ նույնիսկ ի հաշիվ և ի վնաս եկեղեցական գործունեության: Անձամբ կամ այլոց միջոցով հունարենից, ասորերենից և լատիներենից քարգմանեց տարաբնույթ վարքեր, վկայաբանություններ, ճառեր, քարոզներ և այլն, կազմեց ու խմբագրեց բազմաթիվ ժողովածուներ («Տօնամակ», «Ճառընտիր», «Հարանց վարք» ևն), որպեսզի սերունդները շնորհաբան մեր ավանդույթները և «գվտոյ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր» ու շահագցնեն «զլոյս ճրագի նախնույն մերոյ»:

Ինչպես տեսանք, Մագիստրոսը քաջատեղյակ էր նաև Նարեկացու ստեղծագործություններին և մեծապես օգտվել էր նրա բառապաշարից ու բառաստեղծման արվեստից: Բնական է ենթադրել, որ Նարեկացու հանդեպ իր ունեցած համակրանքը Վահրամ-Գրիգոր Բ Վկայասեր որդուն փոխանցելու նպատակով նրան պետք է ժառանգեր նաև Նարեկացու ստեղծագործությունները: Վկայասերի մահից հետո կաթողիկոս դարձավ մինչ այդ աթոռակից, իր բեռորդի Բարսեղ Ա Անեցին: Վերջինիս հաջորդեց Գրիգոր Գ Փոքր Վկայասերը՝ Վկայասերի քրոջ, իսկ Բարսեղի մորաքրոջ թոռը, որը փաստորեն Մագիստրոսի ժառն էր: Գրիգոր Գ Պառլամունտի հաջորդեց իր եղբայր Ներսես Ընդրիակին, իսկ Ընդրիակուն՝ իր Վասիլ եղբոր որդի Գրիգոր Դ Տղան:

Ստորև ներկայացվելիք բառացանկից ակնհայտ է դառնում, որ Ներսես Ընդրիակին նույնպես, քաջատեղյակ լինելով Նարեկացու ստեղծագործություններին, մեծապես օգտվել է նրա բառապաշարից, ինչպես նաև բառաստեղծական ու բանաստեղծական արվեստից, թեև արտաքննապես պահում է լռություն և չի տալիս նրա անունը: Մինչդեռ բառացանկում 25 բառ վկայված է միայն Նարեկացիով ու Ընդրիակով: Դրանցից 14-ը վերցված է Մատյանից:

Նարեկացիական բառապաշարի ու բառաստեղծական արվեստի ընդօրինակման տեսակետից առաջին տեղն զբաղեցնում է Ներսես Լամբրոնացին, որն էլ հենց բարձրաձայնեց Նարեկացու անունը: Իսկ եթե հիշենք, որ Ներսես Լամբրոնացուն 16-ամյա հասակում քահանա էր ձեռնադրել հենց Ընդրիակին, իսկ եպիսկոպոս էր օծել Ընդրիակու եղբորորդի Գրիգոր Դ Տղան, որի ստեղծագործություններում նույնպես զգացվում է նարեկացիական ակնհայտ շունչն ու ազդեցությունը, բայց որքան էլ զարմանալի է, նա ևս չի տալիս Նարեկացու անունը, թեև անուղղակիորեն անվանում է իր ուսուցիչ⁹, ապա կարծում են՝ այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ մայր Հայաստանում Գրիգոր Նարեկացու զրական ժառանգությունը բնավ մոռացված չի եղել, այլ ունենալով լայն տարածում՝ Գրիգոր Մագիստրոսից փոխանցվել է իր ժառանգներին, որոնք, նախ հայրենիքում, իսկ ապա Կիլիկիայում, ավելի քան հարյուր տարի լռելայն օգտվելով դրանից, տարածել են այն ամեննոր: Եվ բնավ պատահական չէ, որ հենց Մագիստրոսի շառավիղներից Ներսես Լամբրոնացին դարձավ Նարեկացու անունը անհայտությունից ի հայտ բերողը: Վերը ասվածը մեկ անգամ ևս հաստատում է այն կարևոր գաղափարը, որ հայ մշակույթը՝ որպես ազգակազմիչ գործոն, զարգացել է անընդմեջ ձևով: Գաղափար, որն ունի ոչ միայն պատմամշակութային ու իմացական նշանակություն, այլև քաղաքական խորք¹⁰:

Ստորև ներկայացվող բառացանկը հարմար գտանք բաժանել երկու խմբի, որոնցից առաջինում տրվում են բառգրքում միայն Նարեկացիով և հետնարեկացիական մատենագիրներով վկայված բառերը, իսկ երկրորդում՝ այն բառերը, որոնք, բացի Նարեկացուց և հետնարեկացիական հեղինակներից, վկայված են նաև ստույգ թվագրություն չունեցող, բայց հետնարեկացիական շրջանում ստեղծված քարգմանական և ինքնուրույն ժողովածուներով: Հաշվի առնելով վերջիններիս ժամանակագրական անստուգության պարագան,

⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 236:

⁹ Այդ մասին մանրամասն տես Վ. Պ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացի և Գրիգոր Տղա, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 3:

¹⁰ Այդ մասին մանրամասն տես Համլետ Ա. Քևորդյան, Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, բաժին Գ, էջ 353-517:

հարկ են համարում համառոտակի ներկայացնել դրանց ստեղծման հանգամանքների ու ժամանակի մասին բառարանագիրների տված տեղեկությունները: Ըստ այդմ, այբբենական կարգով ներկայացվում են բառարանում դրանց կարծազրությունները, համառոտ բացատրությունները և մեր մասնակի հավելումները:

Բարս կամ Բրս մրկ. - «Բարտի բանիբուն վարդապետի ի վանաց Մաշկևորի՝ կամ Մաշկոտորցի, մեկնութիւն աւետարանի սրբոյն Մարկոսի, արարեալ ի թուին 2ՀԴ. 1325... Ոճն պարզ և ստորին ըստ ԺԳ և ԺԴ դարուց, այլ ուրեք հետևող հնախօսութեան»:

Գանչրն. կամ **Գնչ** - «Հաւարումն եկեղեցական երգոց՝ որ զանձք կամ քարոզք կոչին. յորս պանծալի են յօրինուածք Նարեկացոյն և Շնորհալոյն, և քանի մի վարդապետաց՝ զորս յանուանէ նշանակենք ըստ տեղոյն. իսկ մնացեալքն են գործ զանազանից ի յետին դարս՝ ռճով և անշուք բառիք ռամկականօք գլխովին: Միայն քանի մի ընտիր զանձք կան Խաչատուր վարդապետի Տարոնացոյ առաջնորդին Հաղարծնի, որոյ է և Խորհուրդ խորինն ի մուտս պատարագի ամենավայելուչ. իսկ Կեչառեցոյն Խաչատուր զանձք են անհարթք որպէս զայլոցն»: Փաստորեն Գանձարանի սկզբնավորողը եղել է Նարեկացին՝:

Ի գիրս Խոսր. - «Բմա՛ զայլ անուանս պարունակեալս ի նմին մատենի (իմա՛ Խոսրով Անձևացու Մեկնութիւն գրոց ժամակագրութեան,- Հ. Մ.) ըստ զրչագիր և ըստ տպագրեալ օրինակաց»: Այսինքն՝ այս աղբյուրը նույնպէս հաջորդում է Նարեկացուն:

Ճշ - «Ճաշոց»: Թե՛ն Ճաշոց ժողովածուն եղել է նաև Նարեկացուց առաջ, բայց, ինչպէս բառարանագիրներն են ասում, «Համառօտ էր մատենան յառաջագոյն. այլ յետոյ ճոխացոյց զայն Գրիգոր Վկայասէրն հանդերձ գլխատր աշակերտաւ իւրով Կիրակոսի»:

Սա նշանակում է, որ խմբագիրները հեշտությամբ կարող էին օգտագործել նաև Նարեկացու ստեղծած բառերը:

Ճ. Ա, Բ, Գ, ևն մինչև ի Ժ. կամ **ՃՃ** - Տարբերույթ ճառերի ժողովածու՝ ճառընտիր, «հասարակօրէն թարգմանութիւնք երանելոյն Գրիգորի Վկայասիրի որդոյ Մագիստրոսի»:

Մաշր. - «Մաշտոց». Ճիշտ է, այն սկզբնավորվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից, սակայն հետագայում ենթարկվել է լուրջ փոփոխությունների, իսկ վերջին «ըրումն էառ գործս յաուրս Լամբրոնացոյն, և կիլիկեցոց. որպէս յայտ է ի յաւելուածոց նոցին ի ձեռագիրս գրեալս ի ԺԳ դարու»:

Մաշր. Զահկ. - «Մաշտոց լատինացոց թարգմանեալ յունիթոսաց Զահկեցոց ի ԺԴ դարու, միթական և նորահնար թարգմանութեամբ յիսպառ եղծումն հայկական լեզուիս. յորմէ քանի մի ևեթ բառս գրեթէ ռամկականս՝ պէտք եղեն նշանակել ըստ տեղոյն: Ո՛չ է պարտ շփոթել զայս գործ ընդ բուն հայկական Մաշտոցի, յորում կան զովելի թարգմանութեամբ ինչ ինչ յաւելեալ ի կիլիկեցոց»:

Միսաչ. իչ - «Միսայլի եպիսկոպոսի յանյայտ դարու՝ ճառ զովելի ի սուրբ խաչն՝ վայելուչ հայկաբանութեամբ ի Ճ. Գ»:

Յայսմաւ. Հ. կամ Հ = Յ. ևն - Յայսմատուրք ժողովածուի սկիզբը դրել է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը, իսկ վերջնականապէս ձևավորվել է XV դ. Գրիգոր Խղաթեցու կողմից:

Շար. - «Շարական՝ որ է երգարան սքանչելի, ի յուրվից քերթողաց ազգիս յօրինեալ. որոց անուանք բազում մասամբ են յայտնի. և առաւել նշանատրք ի նոսա ճանաչին Մովսէս Քերթոզ Խորենացի, և Ներսէս Շնորհալի՝ հոգելից բանաստեղծք»:

Ոսկիփոր. - «Ոսկիփորիկ: Սովիմբ անուամբ նշանակենք զամենայն ժողովածու գրուածս հատաքեալս ի զանազանից՝ մանաւանդ յետ ԺԲ դարու, պիտանի և անպիտան Եմով՝ իբր ծաղկաքաղ պատմական, մեկնողական, բանասիրական, իմաստասիրական, իմաստական, վիճարանական, վարդապետական, ճառական և այլն, բնագիր կամ թարգմանեալ.»:

¹¹ Այդ մասին մամրանաւան տն՛ս նաև Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, աշխատասիրութեամբ Արմինն Զյոշկերյանի, Եր., 1981, էջ 29-32:

Վրբ հց - «Հարանց վարք. ուր ատենդին սքանչելի գործք և հոգեշարժ խրատք սքրբոց հարց եզիպատացոց և սկիտացոց, քարզմանաբար առեալք ի յունական մատենից, և ինչ ինչ յատրի գրոց կամ ի դիտոց: Տպագրեալ օրինակն ոչ սակաւ զանազանի ի ձեռագրաց, որ և են կրկին ոճով. վասն որոյ ուր դնենք **Վրբ հց** չ իմաստիք երբեմն զհին քարզանութիւնս անյայտ նախ քան զատուրս Լամբրոնացոյն, և երբեմն զտվորականն՝ որ համարեալ է հաւաքումն ի ձեռն Լամբրոնացոյն, և այն՝ է՝ որ լրագոյն, և է՝ որ համառօտ կամ քերականտար ըստ գրչութեան»: Ըստ այսմ, մենք Բաղդրքից վերցրել ենք այն բառերը, որոնք բերված են ժողովածուի լամբրոնացիական տարբերակից, այսինքն՝ չունեն ձ. նշումը, բացի մակբայաբար գործածված **անպարկաստ** բառից:

Վրբ ոսկ. - «Ընդարձակ պատմութիւն վարուց... Յովհաննու Ռսկերբերանի, քարզմանեալ յատուր Գրիգորի Վկայասիրի՝ վերականգնութեամբ նորին»:

Տաղ. - «Հին տաղարան, կամ երգարան եկեղեցական տաղից՝ նախնեաց, միջնոց, և յետնոց. յորոց ոմանք յանուանէ նշանակիին, և ոմանք առանց անուանց գտանին ի կարգի գանձարանին կամ այլոց մատենից: Ի միջոցի տպագրութեան ի տառին՝ հասին ի մեր ձեռս ոչ սակաւ տաղք նորագիտք ի հնութենէ ի վեր երևեալք»: Փաստորեն մինչև ի տառք այդ նորահայտ տաղերում եղած նարեկացիական ծագում ունեցող բառերը չեն ներառված: Զանի որ դժվար է որոշել, թե Նարեկացիով վկայված տվյալ բառը ու՞մ վերագրվող տաղում է գործածված, այդպիսի նշում չեն կատարում բառարանագիրները, ուստի նպատակահարմար գտանք բերել նաև դրանք՝ չբացատելով, որ առանձին բառեր կարող են ստեղծված լինել Նարեկացուց առաջ:

Տօնակ - «Տօնական մատեան, որ և Տօնանամակ, և Պատճառք տօնից կամ Տօնապատճառք: Այն է ճառօրէն մեկնաբանութիւն խորհրդոյ տօնից՝ տէրունականաց կամ սքրբոց զխատրաց. միանգամայն և քաղուած մեկնութեանց ընթերցուածոց ըստ ատուր պատշաճի, համարեալ մասամբ գործ Գրիգորի կամ Յովհաննու Գանձակեցոյ, և Յովհաննու Տարոնեցոյ, և այլոց անանուն անձանց, պէսպէս յարմարեալ ըստ կամս զրչաց ցետին դարս. այլ յամենայնի գտանին և հետք հնութեան յընտիր բառս ինչ»:

Ինչպէս տեսանք, նշված ժողովածուները ամբողջութեամբ կամ մասնակիորեն ստեղծվել են հետնարեկացիական շրջանում հիմնականում՝ Գրիգոր Բ Վկայասերի և իր աշակերտների ու հետևորդների ջանքերով: Զանի որ այդ մատենագիրներն ըստ էության ծանոթ են եղել Նարեկացու ստեղծագործություններին, ուստի, կարծում են, արդարացված է եզրակացնել, որ դրանցում նարեկացիական բառերի առկայությունը վկայում է Նարեկացու բառապաշարից նրանց կրած ազդեցության մասին: Հաշվի առնելով հիշյալ ժողովածուների գործնական բնույթն ու լայն տարածվածությունը, թվում է, սխալ չի լինի ասել, որ Նարեկացու լեզվական ազդեցությունը հետնարեկացիական շրջանի լեզվամտածողության վրա չի սահմանափակվել միայն զրական-գեղարվեստական ստեղծագործություններով, այլ դուրս գալով դրանց սահմաններից՝ տարածվել է նաև կրոնականեղանակ, գիտական ու ժողովրդական խոսակցական լեզվի վրա: Օրինակ, **արբալոյս** բառը բաղդրքում վկայված է միայն Նարեկացու Մատյանով, Ներսես Ընորհալիով և Մխիթար Այրիվանեցիով: Պարզվում է, որ Նարեկացին այն գործածել է նիայն ՂԳ բանի վերնագրում՝ «Արաբք քարզմանաւրէն վասն **արբալոյս խղոյն միտունի**», Ներսես Ընորհալին Գանձ միտունի ստեղծագործության մեջ օգտագործել է ոչ միայն Նարեկացու բառը, այլև արտահայտությունը՝ «**Արբալոյս այսու խղոյն մեռունի օծելոց**»: Վերջապէս, Մխիթար Այրիվանեցին փոքր-ինչ փոխել է բառակապակցությունը, բայց ընդհանուր առմամբ գործածել է նույն իմաստով՝ «Չօծումն **արբալոյս խղով**»: Հարկ կա՞ ասելու, որ հետագայում բառիս գործածությունը մուտք է գործել նաև բանավոր խոսք և այսօր էլ մյուտուն բառի հետ անպայման արտաբերվում է **արբալոյս** բառը՝ առանց մտածելու կամ հիշելու, թե ո՞վ է առաջինը գործածել այն:

Ավելին, նարեկացիական բառերից շատերը, քափանցելով քերականական, իրավագիտական, պատմագիտական, բժշկագիտական, անզամ տոմարագիտական և տարաբնույթ այլ երկեր, դարձել են մասնագիտական եզրեր, որոնց մի մասը շարունակում է գործ

